

Ռուբեն Լ. Մանասերյան  
*Պարմ. գիր. դոկտոր*

**ԱՐՏԱՇԵՍ Ի-Ը ԵՎ ՀՌՈՄԻ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՔԻ ԱՄԻԱՅՈՒՄ  
(Մ. Թ. Ա. 189-179 ԹԹ.)\***

**Բանալի բառեր** – Հռոմ, Հայաստան, Արտաշես, Փառնա-  
կես, Հաննիբալ, Տիտոս Լիվիոս, Պոնտոս:

**Հայ ժողովրդի պատմության մեջ Արտաշես I-ի թագավորումը (մ.թ. ա. 189-160 թթ.) նշանավորվեց կարևորագույն քաղաքական տեղաշարժերով. Հայաստանը գրեթե ամբողջապես միավորվեց կենտրոնացված պետության մեջ և արագորեն վերածվեց Մերձավոր Արևելքում միջազգային հարաբերությունների մշտական և ազդեցիկ գործոնի:**

Այդ իրադարձությունները զուգադիպեցին Միջերկրածովքն ընդգրկող Հռոմեական աշխարհակալության սրընթաց ձևավորման հետ (մ.թ.ա. 202-189 թթ.): Հռոմի անընդմեջ աճող ազդեցությունը Արևելյան Միջերկրածովքում ու նախ և առաջ Փոքր Ասիայում՝ Հայաստանի արևմտյան սահմաններին կից երկրներում, պահանջում էր Արտաշեսից նրա հանդեպ սահմանել իր դիրքը, մշակել գործելակերպը: Հայոց արքայի առջև այդ կարևորագույն հիմնախնդրի ի հայտ գալը՝ հենց նրա գահակալման տարում, անտեսվում է պատմագիտության կողմից, ուստիև մինչ օրս լուսաբանված չէ Հռոմի և հռոմեական դաշնակից թագավորությունների հանդեպ Արտաշես I-ի վարած քաղաքականությունը:

Հռոմի կողմից հելլենիստական երկրների հպատակեցումը սկսվեց Արևմտյան Միջերկրածովքում իր մրցակից տերության՝ Կարթագենի դեմ 202-ին Զամայի ճակատամարտում վճռական հաղթանակից անմիջապես հետո, երբ պարտություն կրեց կարթագենական զորքերի առաջնորդ Հաննիբալը:

Արդեն հաջորդ տարում Հռոմը, հավատարիմ իր արտաքին քաղաքական սկզբունքին՝ չհանդուրժել իր շրջակայքում հզոր և իրեն դիմագրավելու կարող պետությունների գոյությունը, պատերազմ հայտարարեց Մակեդոնիայի թագավորությանը՝ պատրվակ ունենալով մ.թ. ա. 215-ին իր դեմ Կարթագենի հետ Մակեդոնիայի արքա Փիլիպպոսի՝ դաշինք հաստա-

\*Հոդվածն ընդունվել է տպագրության 20.01.2017:

տելու փորձը: Փիլիպպոսը ջախջախվեց մ.թ. ա. 197-ին, և Հռոմի գերիշխանությունը հաստատվեց Հունաստանում: Մ. թ. ա. 191-189 թթ. հռոմեացիները ջախջախեցին արևելքի խոշորագույն հելլենիստական տերության տիրակալ, Սելևկյան արքա Անտիոքոս III Մեծի զորքերը նախ՝ Հունաստանում, հետո Փոքր Ասիայի արևմուտքում՝ Լյուդիայում՝ Մագնեսիա քաղաքից ոչ հեռու (մ.թ. ա. 189-ի հունվար):

Մ. թ. ա. 188-ին Ապամեա քաղաքում (Փոյուգիա) Հռոմը Անտիոքոսին թելադրեց հաշտության պայմանները, որոնք նշանավորեցին արմատական բեկումն Արևելյան Միջերկրածովքում ուժերի դասավորման մեջ: Սելևկյան պետությունը դադարեց գոյություն ունենալ որպես Արևելյան Միջերկրածովքի մեծ տերություն: Անտիոքոսը պարտավորվում էր Հռոմին մուծել վիթխարի ռազմատուգանք, հանձնել մարտական փղերն և ռազմանավատորմը (բացառությամբ 10 նավի): Սելևկյաններին ընդմիջտ արգելվում էր արտաքին քաղաքականություն վարել փոքրասիական թերակղզում (Կիլիկյան Տավրոսից հյուսիս ընկած տարածքներում), այնտեղ դաշինքներ կնքել, մասնակցել պատերազմներին: Անտիոքոսը հռոմեացիներին պատանդներ էր հանձնում (որոնց թվում նաև իր որդուն) և պայմանագրի առանձին կետով պարտավորվում էր հանձնել նաև Հաննիբալին, որը մ.թ. ա. 196-ից սպաստանել էր Սելևկյան արքունիքում՝ եռանդուն կերպով սատարելով հակահռոմեական պայքարի նրա ծրագրերը:

Մ. թ. ա. 188-ին Հռոմեական տիրապետությունը, հռոմեացիների ձևակերպմամբ՝ գերագույն իշխանությունը՝ Imperium Romanum, տարածվեց ամբողջ Փոքր Ասիայի վրա մինչև Տավրոսի լեռները<sup>1</sup>: Imperium-ը զենքի ուժով հաստատված իշխանություն էր. Հռոմի խոշորագույն պատմագիր Տիտոս Լիվիոսը (մ.թ.ա. 53 – մ.թ. 17), բնութագրելով ենթակա ժողովուրդների հետ Հռոմի հարաբերությունների առանձնահատկությունը, նշում էր, որ ուր հասնում է հռոմեական գենքը, այնտեղ հաստատվում է հռոմեական իրավունքը<sup>2</sup>: Նա թվարկում էր նվաճմամբ հաստատված այդ «իրավունքի» բովանդակությունը. ազատություն շնորհում Փոքր Ասիայի քաղաքներին, հարկերից նրանց ազատում, իր հայեցողությամբ պետությունների տարածքի ընդարձակում կամ վերջիններիս բռնազավթում, պատժամիջոցների և տուրքերի սահմանում, թագավորությունների մեծացում և տարածքային կրճատում, խլում և նվիրում<sup>3</sup>:

Հռոմը դաշնագրեր կնքեց փոքրասիական թագավորությունների հետ՝ նրանց հայտարարելով իր բարեկամ և դաշնակից (amicus et socius): Այդ կոչումներին արժանացած թագավորը պարտավոր էր հետևել Հռոմի արտաքին քաղաքականությանը, սեփական զինված ուժերով և նյութապես աջակցել Հռոմին նրա պատերազմների ժամանակ ու չխոչընդոտել իր տարածքում հռոմեախալիկյան վաշխառուառևտրական դասի ներկայացուցիչների ակտիվությանը:

Անտիոքոս III-ի դեմ պատերազմի ակտիվ մասնակից, Հռոմի «դաշնակից» հռչակված Պերգամոնի թագավորությունը Էգեյան ծովի ափերին մի

1 Տե՛ս Tit. Liv., XXXVIII, 48(4).

2 Տե՛ս Tit. Liv., XXXVII, 54(23).

3 Տե՛ս Tit. Liv., XXXVIII, 48(4).

ոչ մեծ պետությունից, Հռոմի սենատի որոշման շնորհիվ ընդարձակվեց դեպի արևելք: Հռոմեացիները նրան միացրին Փոյուգիան, Գալաթիան (Կենտրոնական Ասատուլիայում՝ Հալիս գետի հովտում) և Լիկանոնիան: Մինչև Պերգամոնին Գալաթիան միացնելը, մ.թ.ա. 189-188 թթ. այն ավերվեց հռոմեական լեգիոնների կողմից՝ կոնսուլ Մանլիոս Վուլսոնի գլխավորությամբ: Հռոմի «դաշնակիցը» դարձավ Բյութանիայի թագավորությունը, որ տիրում էր Բոսֆորի փոքրասիական ափին: Հռոմն իր գերակայությունը սահմանեց Կապադովկիայի թագավորության վրա: Նրա թագավոր Արիարաթ IV Բարեպաշտը, որը Անտիոքոսի կողմից մասնակցել էր Մագնեսիայի ճակատամարտին, իսկ այնուհետև ռազմապես աջակցել էր գալաթներին ընդդեմ Մանլիոս Վուլսոնի զորքերի, Հռոմին մուծեց ռազմատուգանք և նրա հետ կնքեց «բարեկամական դաշինք»: Իսկ Արիարաթ V-ի օրոք (մ.թ.ա. 163-131) Կապադովկիան վերածվեց Հռոմի քաղաքականության հլու կամակատարի: Այսպիսով, արդեն մ.թ.ա. 188-186 թթ. Հռոմի ազդեցությունը տարածվեց փոքրասիական թերակղզու խորքը՝ մինչև Եփրատ գետը՝ Հայաստանի արևմտյան սահմանը:

«Դաշնակից» դարձած թագավորին շնորհելով հռոմեական զենքով նվաճած տարածքներ (Փոյուգիա, Գալաթիա և այլն)՝ սենատը դիտարկում էր դրանք որպես հռոմեացի ժողովրդի սեփականություն (dominium): Այդ տարածքների նկատմամբ Հռոմը պահպանում էր իր սուվերենությունը, կարող (և իրավասու) էր դրանք ետ առնել իր ուզած պահին: «Դաշնակից» թագավորը ընդամենը համարվում էր այդ տարածքի տիրողը<sup>4</sup>: «Դաշնակից» արքաների հետ հարաբերություններում (նրանցից ժամանակագրորեն առաջինն էր Նումիդիայի արքա Մասինիսան՝ Կարթագենի դեմ պայքարում Հռոմի հավատարիմ աջակիցը) ի սկզբանե առկա էր, և ամրապնդվում էր այն գաղափարը, որ Հռոմն օժտված է սեփականության իրավունքով նույնիսկ նրա ամբողջ, այսինքն՝ ժառանգական թագավորության նկատմամբ, իսկ ինքը՝ «դաշնակից» արքան, միայն օգտվում է թագավորությունից<sup>5</sup>:

Այսպիսով, Imperium Romanum-ը, ընդարձակվելով Փոքր Ասիայում մինչև Տավրոս, իրենից ներկայացնում էր տեղական պետությունների հետ ոչ իրավահավասար հարաբերությունների մի համակարգ, որը խիստ սահմանափակում էր նրանց սուվերենությունը՝ ինքնուրույն արտաքին քաղաքականություն վարելու հնարավորությունը, իսկ միապետությունների համար՝ նաև ինքնուրույնաբար գահը փոխանցելու իրավունքը. յուրաքանչյուր գահակալում այդուհետ կարիք ուներ Հռոմի սենատի հավանության:

Մ. թ. ա. 189-ին՝ Անտիոքոս III-ի պարտության պահին, հայաստանյան նրա կուսակալները՝ ստրատեգոսները՝ Արտաշեսն ու Զարեհը, իրենց հռչա-

4 Տե՛ս Tit. Liv. XLV, XIII, 15.

5 Տե՛ս Nicolet Cl. "L'imperialisme" romain. "Rome et la conquête du monde méditerranéen". T. 1. P., 1993, p. 893: Կլ. Նիկոլեն ծավալապաշտությունը հիմնավորող այդ «տեսության» ի հայտ գալը տանում է մինչև մ.թ.ա. 168 թվականը՝ Մակեդոնիայի թագավորության՝ Հռոմից նվաճվելու տարին, սակայն Տիտոս Լիվիոսը քանիցս հաղորդում է, որ ամբողջ Փոքր Ասիայի վրա հռոմեական տիրապետությունը imperium-ը մատնանշվում է Հռոմում մ.թ.ա. 188-ին հռոմեասելևկյան խաղաղ բանակցությունների ընթացքում՝ որպես կայացած և տեղացի ժողովուրդների կողմից ճանաչված փաստ: Հռոմի կողմից մեծատիրական գաղափարի կիրառումը Հայաստանի նկատմամբ՝ սկսած Տիգրան III-ի գահակալումից (մ.թ.ա. 20 թ.) և դրա իրավական և քաղաքական հետևանքները Հայաստանի համար, տե՛ս **Մանասերյան Ռ.**, Հայաստանը Արտավազդից մինչև Տրդատ Մեծ, եր., 1997, էջ 74-135:

կեցին թագավորներ: Հայոց հին պատմության այս կարևորագույն ակտերից մեկն իրականացավ առանց Սելևկյանների կողմից որևէ դիմադրության՝ նրանց հզորության լիակատար խորտակման պայմաններում: Փոքր Ասիայում արագորեն սկսել էր ձևավորվել հռոմեական տիրապետության կոշտ համակարգը: Այդ իրողությունը պահանջում էր հստակ և արագ դիքորոշում:

Ստրաբոնի հաղորդմամբ՝ Արտաշեսն ու Ջարեհը, իրենց հռչակելով արքաներ, «հարեցին հռոմեացիներին» (Strabo XI, 14,15): Ստրաբոնի այս պնդումը այլ աղբյուրների վկայություններով հաստատվելու կարիք ունի: Նրա վրա հենվող տեսակետների համաձայն՝ «հայոց արքան բարեկամական շփման մեջ էր մտել հռոմեացիների հետ և ստացել նրանց հավանությունը»<sup>6</sup>: Արտաշեսն ու Ջարեհը թագավորական տիտղոսներ ընդունեցին «Հռոմի սենատի հավանությամբ և նրա հովանավորության ներքո»<sup>7</sup>: Այսպիսով, համաձայն մեջբերված տեսակետների՝ հայոց թագավորները «բարեկամության» դաշինքներ կնքեցին Հռոմի հետ, այսինքն՝ ճանաչեցին իրենց նկատմամբ Հռոմի քաղաքական գերակայությունը՝ դրանից բխող իրավական հետևանքներով:

Հռոմի հանդեպ Մեծ Հայքի արքա Արտաշեսի վերաբերմունքը աղբյուրների սակավության պատճառով բարդ հետազոտական հարց է, որը հնարավոր է պարզաբանել, եթե քննվեն նրա արտաքին քաղաքականությանը վերաբերող երեք դրվագներ. ա) դիքորոշումը Հռոմի նկատմամբ մ.թ.ա. 189-187 թթ., բ) Հաննիբալին քաղաքական ապաստանի տրամադրումը, գ) մասնակցությունը մ.թ.ա. 179-ի խաղաղ պայմանագրի կնքմանը, որով վերջ տրվեց Փոքր Ասիայի պետությունների միջև մեծ պատերազմին: Ուշագրավ է, որ Մագնեսիայի ճակատամարտում (մ.թ.ա. 189 թ. հունվար) Անտիոքոսի բանակի էթնիկական կազմը նկարագրած Տիտոս Լիվիոսը և Պոլիբիոսի աշխատությանը հետևած Ապպիանոսը (մ.թ. II դարի կես) նրա մեջ չեն հիշատակում հայերին. այդ լռությունը կարող է միայն հուշել, որ Հայաստանի ստրատեգուները խույս են տվել Սելևկյան արքային զորք տրամադրելուց, այսինքն՝ փաստորեն անկախացել են մ.թ.ա. 190-ին՝ մինչև Մագնեսիայի ճակատամարտը:

Հարկ է ուշադրություն դարձնել, որ Տիտոս Լիվիոսը և Ապպիանոսը, մանրամասն հաղորդելով Հռոմ կամ Փոքր Ասիայում հռոմեացիների բանակատեղ Պերգամոնի, Բյութանիայի, Կապադովկիայի թագավորներից և բազմաթիվ ազատ քաղաքներից եկած դեսպանությունների մասին, դարձյալ չեն հիշատակում հայոց թագավորների ներկայացուցիչներին: Դժվար է պատկերացնել, որ նման փաստը կարող էր աննկատ մնալ հռոմեացի պատմագիրներից և առաջին հերթին՝ Պոլիբիոսից, որի աշխատությունն աղբյուր է ծառայել Տիտոս Լիվիոսի և Ապպիանոսի համար:

Տիտոս Լիվիոսի կարևոր հաղորդմամբ՝ մ.թ.ա. 188-ի ձմռանը հարավարևմտյան Ասիայում (Պիսիդիայում) վրան խփած կոնսուլ Մանլիոս Վուլտոնի մոտ «եկան դեսպանություններ բոլոր կողմերից, Տավրոսից այս

6 Մարգարյան Գ. Խ., Հայաստանի միավորումը և հզորացումը Արտաշես Ա-ի օրոք, «Հայ ժողովրդի պատմություն», հատ. 1, Եր., 1971, էջ 525:

7 Grousset R. Histoire de l'Arménie dès origines à 1071, P. 1973, p. 81.

կողմը (cis) գտնվող բոլոր քաղաքներից և ժողովուրդներից»<sup>8</sup>:

**Այստեղ Տավրոսի լեռնաշղթան մատնացույց է արվում որպես Հռոմի ազդեցության ծայրագույն՝ արևելյան սահմանը: Չնայած Տավրոսի լեռների գտնվելու տեղի մասին հույների պատկերացումների աղոտ բնույթին՝ «Տավրոսից այս կողմ» ձևակերպումը հստակ ուրվագծում է Հռոմի հետ «բարեկամության», այսինքն՝ կախվածության հարաբերություններ հաստատած ժողովուրդների և երկրների աշխարհագրական շրջանակը, և պետք է նշել՝ բավականին որոշակի կերպով բացատրում է նրանց շարքում հայերի ներկայությունը:**

Հունահռոմեական պատկերացումներով՝ Տավրոսի լեռները ունեին հյուսիսային հատված, որը համապատասխանում էր Եփրատի ակունքների վայրին և վերին հոսանքի շրջանին. Ստրաբոնի խոսքով՝ Եփրատը սկիզբ է առնում Տավրոսի հյուսիսային լանջից<sup>9</sup>, այնուհետև այդ իր հյուսիսային կետից Տավրոսի լեռնաշղթան տարածվում է դեպի հարավ, որտեղ նրան, դարձյալ Ստրաբոնի պատկերացմամբ, Կապադովկիայի և Հայաստանի միջև կտրում է Եփրատը: Գետի հակառակ՝ աջ ափից Տավրոսին դիմակայում է Անտիտավրոսը: Այստեղից շարունակվելով հարավային ուղղությամբ՝ Տավրոսը ձյուղավորվում է արևելյան և արևմտյան շղթաների: Արևելյանը անջատում է Հայաստանի լեռնաշխարհը Միջագետքի հարթավայրից, իսկ արևմտյանը հասնում է փոքրասիական թերակղզի, ձգվում նրա հարավային ափով՝ բոլորելով Դաշտային Կիլիկիան (Կիլիկյան Տավրոս անունով), հասնում գրեթե մինչև Էգեյան ծով (Արևմտյան Տավրոս): Այսպիսով, հունական պատկերացումներով, որոնք հիմք հանդիսացան մ.թ.ա. 189–188 թթ. հռոմեացիների քաղաքական պատկերացումների համար, Ասիան (փոքրասիական թերակղզին) արևելքում անջատվում է մնացյալ՝ խորին արևելքից, այսինքն արդեն Հայկական բարձրավանդակից, Տավրոսի լեռնաշղթայով, որը ձգվում է հյուսիսից հարավ՝ փաստորեն ուղղահայաց ձևով:

Տիտոս Լիվիոսի մեկ այլ կարևոր վկայությամբ՝ Տավրոսի լեռը դարձավ Ասիայում հռոմեական տիրապետության հեռավոր սահմանագիծը՝ եզրը (finem imperii Romani)<sup>10</sup>: Իբրև այդ տիրապետության սահմանագիծ հիշատակված Տավրոսը ակնհայտորեն ոչ թե Կիլիկյան Տավրոսն է, այլ հաշվի առնելով Կապադովկիայի դաշնակից (մ.թ.ա. 188–ից) լինելը Հռոմին՝ Տավրոսի ավելի հեռավոր հատվածը: Այն հակադրվում է Ստրաբոնի հիշատակած Անտիտավրոսին, որը Կապադովկիան եզրափակում էր արևելքից: Այդ իրողությունը հաստատվում է Տիտոս Լիվիոսի հերթական կարևոր վկայությամբ, ըստ որի՝ Անտիոքոս արքայից հռոմեացիների կողմից խլած Ասիան Էգեյան ծովից միջև «Տավրոսի լեռան» գագաթներն ունի երկարությամբ ավելի քան 30 օր ճանապարհ<sup>11</sup>: Այսինքն՝ Էգեյան ծովափից դեպի արևելք այդ երկարությունը կազմում էր 900 կմ–ից ոչ ավելի տարածք, որն, անպայման իր մեջ ներառնելով Կապադովկիան, հասնում էր

8 Tit. Liv., XXXVIII, 37(1); ex omnibus civitatibus gentibusque quae cis Taurum montem incolunt...

9 Տե՛ս Strabo, XI, 14, 2.

10 Տե՛ս Tit. Liv., XXXVIII, 48(4): ...et hoc quo finem imperii Romani Taurem montem statuistis.

11 Տե՛ս Tit. Liv., XXXVIII, 59(5–7): Hanc regionem dierum plus triginta in longitudinem, decem inter duos maria latitudinem patentem, usque ad Tauri montis juga Antiocho ademptam...

մինչև Եփրատ՝ Հայաստանի սահմանը:

Այսպիսով, Տիտոս Լիվիոսի կողմից քանիցս շեշտելը, որ Հռոմի հետ հարաբերությունների մեջ մտել են մինչև Տավրոսի լեռնաշղթան ապրող ժողովուրդները հստակ ցուցում է բովանդակում, որ մ.թ.ա. 189-188 թթ. հայոց գահակալները զերծ են մնացել Հռոմի հետ քաղաքական (դիվանագիտական) շփումներից: Տիտոս Լիվիոսի տվյալների լույսի ներքո Ստրաբոնի հաղորդումը, որ Արտաշեսն ու Ջարեհը մ.թ.ա. 189-ին «հարեցին հռոմեացիներին» ճիշտ կլինի հասկանալ որպես պատերազմական իրադրության մեջ գուտ ռազմական դիրքորոշում՝ ի նպաստ Հռոմի: Այսինքն՝ Անտիոքոսին զորք տրամադրելուց բացահայտ հրաժարումը, ինչպես երևում է, չունեցավ միջազգային իրավական հետևանքներ՝ դիվանագիտական նախաձեռնություններ, Հռոմի կամ Ասիայում նրա ներկայացուցիչների հետ հարաբերությունների հաստատման՝ դաշինքի կնքման փորձ: Առկա տվյալները բավարար հիմք են տալիս պնդելու, որ մ.թ.ա. 188-187 թթ. Փոքր Ասիայում Ապամեայի դաշնագրով Հռոմի գերիշխանության կայացման պայմաններում Արտաշեսը չէր ձգտում Հռոմի հետ հարաբերությունների հաստատմանը՝ սենատի կողմից ձանաչվելուն և նրա հանդեպ պահպանում էր միանգամայն անկախ կեցվածք: Այդ կեցվածքին համապատասխանում է Ապամեայի հաշտության կնքումից հետո Արտաշեսի գործած կարևոր արտաքին քաղաքական քայլը, որն արդեն բացահայտորեն հակասում էր Հռոմի շահերին. նա ապաստան տվեց Հռոմի անհաշտ թշնամուն՝ Հաննիբալին:

Մի շարք պատմաբաններ, որոնք պատշաճ կերպով հաշվի չեն առնում մ.թ.ա. 188-ից հետո Փոքր Ասիայում Հռոմի գերիշխանության առկայությունը և հետևաբար հայոց արքայի՝ Հռոմի հանդեպ հստակ դիրքորոշում ունենալու անհրաժեշտությունը, Հաննիբալի փախուստը Հայաստան հակված են դասելու լեգենդների շարքին՝ չընդունելով դրա մասին հաղորդումների վավերականությունը<sup>12</sup>: Ընդհակառակը, Հաննիբալի գործունեությունն ու կյանքն ուսումնասիրած ոչ սակավաթիվ պատմաբաններ համաձայն են, որ Հաննիբալն իսկապես փրկություն է գտել Հայաստանում<sup>13</sup>: Ի. Շ. Շիֆմանի կարծիքով՝ որևէ «ֆիզիկական անհնարինություն չկար», որ Հաննիբալը ուղևորվեր Հայաստան՝ Մազնեսիայի ձակատամարտից հետո, երբ բանակցություններ էին ընթանում Անտիոքոսի և հռոմեական դեսպանների միջև<sup>14</sup>: Նրա ներկա գտնվելը Հայաստանում, սակայն, չի կապվում Արտաշեսի քաղաքական դիրքի հետ, որը, ի դեպ, Շիֆմանի կարծիքով՝ «պրոհռոմեական» էր:

Հարցը պարզաբանելու համար հարկ է նախ պատկերացնել Հաննիբալի փախուստի հնարավոր երթուղին. Մազնեսիայի ձակատամարտի

12 Տե՛ս **Մանանդյան Հ.**, Տիգրան Երկրորդը և Հռոմը, Եր., 1972, էջ 43:

13 Տե՛ս **Бокшанин А.Г.** Ганнибал, «Историческая Энциклопедия», т. 4, М., 1963.

14 Տե՛ս **Шифман И. Ш.** Ганнибал, М., 1976, с. 319-320. Ի. Շ. Շիֆմանը հատուկ անդրադարձել է նույն թեմային. **Шифман И. Ш.** Ганнибал в Армении. - ՊԲՀ, 1980, N 4. Շիֆմանի կարծիքով Հաննիբալը Հայաստանում մնաց մեկ տարի և Հայաստանից մեկնեց Կրետե: Սակայն Կոռնելիոս Նեպոսի շարադրանքով՝ Հաննիբալը մեկնում է Կրետե Պամփյուլիայի ափերից (այսինքն՝ ծովային ձանապարհով) Անտիոքոսի՝ Հռոմի հետ խաղաղ բանակցությունների ժամանակ, երկուդ տաժելով, որ նրան կարող են հանձնել Հռոմին: Այսպիսով, Նեպոսի տեղեկությունը հստակ գետեղվում է մ.թ.ա. 189-188 թթ. կոնկրետ իրադրության մեջ:

պահին Հաննիբալը սելևկյան նավատորմի հետ գտնվում էր Պամփյուլիայի ափերի մոտ (հարավ-արևմտյան Փոքր Ասիա): Այստեղ նրան շրջափակել էր Հռոմի դաշնակցի՝ Հռոդոսի նավատորմը: Մ. թ. ա. 185-ից Հաննիբալը, համաձայն Տիտոս Լիվիոսի, Բյութանիայում էր՝ Պրուսիոս Ի-ի արքունիքում: Բյութանիայում մոտ երեք տարի ապրելուց հետո Հաննիբալը ինքնասպան եղավ իրեն հռոմեացիներին հանձնելու պատրաստ Պրուսիոս Ի-ի զինվորների ձեռքը չընկնելու նպատակով:

Մ. թ. ա. 189-188-ին Պամփյուլիայի ափերից ավելի քան անհարին էր ցամաքային ճանապարհով՝ Հռոմի հավատարիմ դաշնակից Պերգամոնի կողմից և հռոմեական զորքերով վերահսկող տարածքներով հասնել Բյութանիա, առավել ևս, որ Պրուսիոս Ի-ը այդ պահին ջանում էր ձեռք բերել Հռոմի բարեհաճությունը: Հռոմեացի պատմիչ Կոռնելիոս Նեպոսը հայտնում է, որ Հաննիբալը նախ փախավ Կրետե, իսկ այնտեղից ճամփա ընկավ դեպի Բյութանիա<sup>15</sup>: Նեպոսը նշում է Կրետե գալու նպատակը՝ վերցնել Գորտինա քաղաքում պահվող իր գանձերը: Կրետեից նա պիտի շտապ հեռանար. կղզուն մոտենում էր հռոմեական նավատորմը: Ստեղծված վիճակում Հաննիբալի համար միակ անվտանգ վայրը Սելևկյաններից անկախացած և հռոմեացիներին անմատչելի Հայաստանն էր՝ Եփրատի և Տավրոսի այն կողմում:

Հայաստանում Հաննիբալի ապրելու մասին հաղորդում են Ստրաբոնն<sup>16</sup> ու Պլուտարքոսը<sup>17</sup>: Պլուտարքոսի հաղորդմամբ՝ Արտաշեսը ընդգրկել էր Հաննիբալին իր մերձավորների շրջանակի մեջ, դարձրել իր խորհրդականը, այսինքն՝ պաշտոնապես ձևակերպել էր նրա ներկայությունը իր արքունիքում: Հայոց նոր մայրաքաղաք Արտաշատի համար Արաքսի ափին տեղանք ընտրելիս Արտաշեսը հաշվի առավ Հաննիբալի դիտողությունները այդ տեղանքի ստրատեգիական առավելությունների մասին: Պլուտարքոսի և Ստրաբոնի պահպանած տեղեկությունները ոչ վավերական ճանաչելու դեպքում (միանգամայն անհիմն կերպով) անհայտության մշուշով է ծածկվում Հաննիբալի կյանքի մոտ երեք տարին (մ.թ.ա. 189-186 թթ.): Ուշագրավ է, որ հռոմեական պատմական ավանդույթն ի դեմս Տիտոս Լիվիոսի և Կոռնելիոս Նեպոսի (մ.թ.ա. մոտ 100-30 թթ.), ի տարբերություն հունականի՝ լռում է Հաննիբալի կենսագրության հայաստանյան ժամանակահատվածի մասին: Ըստ Տիտոս Լիվիոսի՝ Հաննիբալը Անտիոքոսի մոտից անմիջապես գալիս է Պրուսիոսի արքունիք<sup>18</sup>: Ակնառու է, որ Հաննիբալի ընդունումը Հայաստանում Հռոմի քաղաքական կամքի և միջազգային հեղինակության բացահայտ անտեսում էր և հռոմեական պատմագրությունը մոռացության է մատնել այդ բնույթի փաստը, որը անհարիր էր մ.թ.ա. 189-ական թթ. միջազգային իրադրությանն իր տված պատկերին<sup>19</sup>:

15 Տե՛ս **Nep** C. Han., 9.

16 Տե՛ս **Strabo**, XI, 14, 6.

17 Տե՛ս **Plut.** Luc. XXXI.

18 Տե՛ս **Tit. Liv.**, XXXIX, 51.

19 Հաննիբալի հալածանքի կազմակերպիչ Տիտոս Ֆլամինիոսի (**Plut.** Tit. XX) կենսագրության մեջ Պլուտարքոսը, համաձայն Հայաստանում Հաննիբալի մնալու մասին իր հաղորդմանը, նշում է, որ կարթագենացի զորավարը երկար ճամփորդություններից հետո նոր միայն եկավ Բյութանիա:

Այսպիսով, դիտարկելով Հաննիբալի գալուստը Հայաստան՝ հարկ է առաջին հերթին շեշտել, որ այդ փաստը կարթագենացու միակողմանի նախաձեռնության հետևանքը չէր, և որ այն հնարավոր դարձավ միայն հայկական կողմի արտաքին քաղաքական դիրքորոշման հետևանքով, ինչն իրականում նշանակում էր Արտաշեսի կողմից Հռոմի հանդեպ միանգամայն անկախ և անգամ թշնամական դարձած դիրքի ցուցադրում:

Մ.թ.ա. 186-ին Հաննիբալը հեռացավ Հայաստանից Բյուրանիա՝ Պրուսիոս I-ի արքունիք: Ինչո՞ւ նա չկամեցավ մնալ Հայաստանում՝ իր համար, անշուշտ, անվտանգ պայմաններում և գերադասեց իրեն ենթարկել մահացու ռիսկի: Դա հասկանալի է լինելու, եթե հաշվի առնենք Փոքր Ասիայի արևմուտքում մ.թ.ա. 185-ին ուրվագծվող քաղաքական իրադրությունը: Հռոմի դաշնակից Պրուսիոսը պատերազմի մեջ մտավ Հռոմի հովանավորյալ դաշնակից Եվմենեսի հետ: Պրուսիոսին աջակցեց Փիլիպպոս Մակեդոնացին, որը չէր հրաժարվել Բալկաններում հռոմեական գերիշխանությունը խորտակելու մտքից: Այդ կոնֆլիկտը հղի էր Բյուրանիայի և Մակեդոնիայի վրա հռոմեական ազդեցության անկմամբ, և Հաննիբալը հույս էր փայփայում այստեղ նպաստել բացահայտ հակահռոմեական դաշինքի ստեղծմանը<sup>20</sup>:

Հաննիբալին ապաստան տրամադրելուց հետո Արտաշեսի հաջորդ նշանակալից միջազգային քայլն էր նրա մասնակցությունը մ.թ.ա. 179 թ. խաղաղ պայմանագրի կնքմանը: Դրանով վերջ դրվեց պատերազմին, որին մասնակցեցին Փոքր Ասիայի բոլոր թագավորությունները: Այստեղ Հռոմի «դաշնակիցները»՝ Պերգամոնը, Կապադովկիան, Բյուրանիան և Պափլագոնիան դիմակայում էին Պոնտոսին և Փոքր Հայքին:

Մ.թ.ա. 182-ին Պոնտոսի արքա Փառնակեսը (185-170) գրավեց Սև ծովի ափի խոշոր հունական քաղաք Սինոպեն, ավելի ուշ ներխուժեց Կապադովկիա, Պափլագոնիա, փորձեց զավթել Պերգամոնին ենթակա Գալաթիան՝ անտեսելով այդ երկիրը սենատի կողմից Եվմենեսին շնորհելու փաստը, բայց պարտվեց Եվմենեսի, Պրուսիոս II-ի և Արիարաթ IV-ի միացյալ ուժերից: Փառնակեսի դաշնակիցն էր Փոքր Հայքի ժառանգական տիրակալ, Պոլիբիոսի բնորոշմամբ՝ «սատրապ» Միհրդատը: Նա հարձակողական գործողություններ էր վարում Արիարաթ IV-ի դեմ (**Polyb**, XXV, 2,11-12):

Հռոմը պատերազմի ընթացքում հանդես եկավ շահագրգռված դիտորդի դերում: Մ.թ.ա. 183 -ին՝ մինչև գործողությունների սանձազերծվելը, Հռոմի սենատը ճանաչելով գերագույն միջազգային ատյան (արքիտոր)՝ Եվմենեսն ու Փառնակեսը դիմեցին նրան՝ իրենց միջև Սինոպեի մասին վեճը հանգուցալուծելու ակնկալիքով:

Սենատը կոնֆլիկտը տեղում քննելու նպատակով մ.թ.ա. 182-180 թթ. պատերազմական գործողությունների ժամանակ Փոքր Ասիա առաքեց իր անդամներից բաղկացած երեք պատվիրակություն: Հռոմեացիները արդեն

20 Մ.թ.ա. 195-189 թթ. Աստիոքոս III-ի արքունիքում գտնվելու ժամանակ Հաննիբալը ջատագով էր Փիլիպոսի և Աստիոքոսի ռազմական դաշինքի կնքմանն ընդդեմ Հռոմի: Մ. թ. ա. 183-ին Պրուսիոսը գիջեց Հռոմի ճնշմանը և հաշտվեց Եվմենեսի հետ: Հռոմից նրա ներվելու գինն էր՝ հռոմեացիներին Հաննիբալի մատուցությունը... Սակայն Հաննիբալն իրավացի դուրս եկավ իր կանխատեսման մեջ, որ հռոմեական կողմից նոր պատերազմն անխուսափելի է: Այն սկսվեց մ.թ.ա. 172-ին և ավարտվեց մ.թ.ա. 168-ին՝ Մակեդոնիայի ջախջախմամբ և որպես թագավորություն վերացմամբ:



հակված չէին խրախուսելու Եվմենեսի հետագա հզորացումը (նրա թագավորությունը դեպի արևելք զգալի ընդարձակելուց հետո)<sup>21</sup>: Նրանք խաղաղություն պարտադրեցին կողմերին, երբ ակնհայտ դարձավ Պերգամոնի, Կապադովկիայի և Բյութանիայի ճնշող ռազմական առավելությունը Պոնտոսի նկատմամբ: Խաղաղ պայմանագիրը կնքվեց մ.թ.ա. 179-ին: Պատերազմի մասնակիցները պարտավորվեցին. «թող առիավետ խաղաղություն լինի մի կողմից՝ Եվմենեսի, Պրուսիոս II-ի և Արիարաթ IV-ի և մյուս կողմից Փառնակեսի և Միհրդատի միջև»<sup>22</sup>: Փառնակեսը հեռանում էր Գալաթիայից ու Պափլագոնիայից, վերադարձնում ռազմագերիներին, ռազմավարը, հանձնում պատանդներին և հաղթողներին մուծում 1100 տաղանդ ռազմատուգանք:

Սակայն Հռոմը, նպատակ ունենալով ապահովել կողմերի միջև ուժերի հավասարակշռությունը, հավանություն տվեց Սինտպեի միացմանը Պոնտոսին. Փառնակեսը պահպանեց իր այդ գլխավոր նվաճումը՝ դարձնելով այն իր աթոռանիստ քաղաքը: Առանձին կնքված պայմանագրով Փառնակեսը պարտավորվում էր բարեկամություն պահպանել Հռոմի հետ<sup>23</sup>: Հռոմի հովանու ներքո Պոնտոսի արքան դաշինքներ կնքեց Ղրիմի Խեռոսնեսոս քաղաք-պետության և նախադրիմյան տափաստաններում քոչող սարմատների առաջնորդ Գաթալոսի հետ: Պոլիբիոսը հատուկ նշում է, որ մ.թ.ա. 179-ի խաղաղության բազմակողմանի պայմանագրի կնքմանը հրավիրվեցին պատերազմին ոչ մասնակից՝ չեզոք պետությունները: «Պայմանագրի մեջ ներառվեցին Ասիայի դինաստիաներից՝ Արտաքսիասը Հայաստանի մեծ մասի տիրակալը («արխոն») և Ակուսիլոքոսը, իսկ Եվրոպայից՝ սարմատ Գաթալոսը, ինքնավար համայնքներից՝ հերակլետոցիները, մեսեմբրիացիները, խեռոսնեսցիները և կիզիկոսցիները» (Polyb., XXV, 2)<sup>24</sup>:

Միջազգային այս «զագագաթաժողովի» տեղը և ներկայացուցչական մակարդակը հայտնի չեն, հավանաբար, թագավորները ներկայացված են եղել իրենց դեսպաններով (մ.թ.ա. 181-ի պատերազմում կարճատև զինադադարի կնքմանը մասնակցեցին Եվմենեսի կողմից՝ նրա եղբայր Ատտալոսը, հռոմեական դեսպանությունը): Պոլիբիոսի ներկայացրած ռազմական գործողությունների նկարագրությունը, խաղաղ բանակցություններին մասնակիցների թվարկումը (Եվմենես, Պրուսիոս, Արիարաթ, Փառնակես, Միհրդատ) արդեն որևէ կասկած չեն թողնում, որ Արտաշեսը չեզոք դիրք էր գրավում մ.թ.ա. 182-179 թթ. Հայաստանի արևմտյան սահմաններից ոչ հեռու (Գալաթիայում, Կապադովկիայի արևելքում և Պափլագոնիայում) տեղի ունեցող պատերազմի նկատմամբ<sup>25</sup>: Պատերազմի մասնակից չեն

21 Will E. Histoire politique du monde hellénistique, t. 2, P., 2003, p. 289, 290.


22 Polyb., xxv, 2.

23 Տե՛ս Колобова К.М. Фарнак I Понтийский – Вестник древней истории, 1949, N 3, с. 31.

24 Պայմանագրի մասնակից Ասիայի դինաստ Ակուսիլոքոսը՝ **Գ. Խ. Սարգսյանի** (նշվ. աշխ., էջ 546) համոզիչ ենթադրմամբ պիտի լիներ Ծոփքի թագավորը: Նշենք, որ եղած իրադրության մեջ Փոքր Ասիայի արևելքում Կապադովկիային և Մեծ Հայքին կար մեկ հարևան պետություն՝ Ծոփքը:

25 Միանգամայն սխալ է այն կարծիքը, թե Արտաշեսը 182-179 թթ. «հանդես էր գալիս, որպես հակահռոմեական խմբավորման ներկայացուցիչ» (Տե՛ս Սարգսյան **Գ.Խ.**, նշվ. աշխ., էջ 546) և 182-179 թթ. պատերազմի ընթացքում հարվածել էր Փոքր Հայքի թիկունքին՝ գրավելով նրանից Կարենիտիսն ու Գերբսենեն (**Սարգսյան Գ.Խ.**, նույն տեղում) այլ կերպ ասած, պատերազմել էր պրոռոմեական կռալիցիայի կողմից: Այն ա) նախ չի հաստատվում Պոլիբիոսի վկայություններով, ք) հետևանք է ոչ միշտ պատկերացումների, թե իբր 189-188 թթ. Արտաշեսը բարեկամության դաշինք էր կնքել Հռոմի

Փոքր Ասիայի պետությունները մ.թ.ա. 179 թվականին



Վ.Վ. համահայկական հանրեւ

Թ. (ԺԵ) քարի, թիվ 1 (57), հունվար-մարտ, 2017

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

եղել պայմանագրի կնքմանը հրավիրված մյուս կողմերը՝ ազատ քաղաքները՝ Հերակլեան, Մեսեմբրիան, Խեռսոնեսոսը, Կիզիկոսը և Ղրիմի սարմատները:

Այդ չեզոք պետությունների՝ միջազգային հարաբերությունների սուբյեկտների շարքում, որոնք մասնակցեցին Փոքր Ասիայում խաղաղությունը վերականգնող պայմանագրի կնքմանը, առաջինը նշվում է Մեն Հայքը՝ մի փաստ, որը, անշուշտ, արտացոլում է նրա ճանաչված լինելը վերջիններիս մեջ որպես ամենաազդեցիկ: Դարձյալ կասկածից վեր է, որ Արտաշեսի ընդգրկվելը պայմանագրի կնքմանը կատարվեց պատերազմում հաղթած կողմի նախաձեռնությամբ: Իր հերթին, ակնհայտ է, որ Արտաշեսի համաձայնությունը պայմանագրի մասնակից լինելուն նշանակում էր նրա համաձայնությունը պայմանագրի պայմաններին, այն բանին, որ նա, անշուշտ, իր ունեցած շահագրգռվածության հետևանքով պարտավորություններ էր ստանձնում պայմանագրում արձանագրված դրույթների նկատմամբ:

Միջազգային այդ գազաթաժողովին Արտաշեսի մասնակցությանը իրավացի գնահատական է տվել Է. Բիկերմանը. մ.թ.ա. 179-ին «Արտաշեսը հասավ իր սուվերենության ճանաչմանը Փոքր Ասիայի պետությունների կողմից»<sup>26</sup>:

Այս իրողությունն ակնհայտ է, քանի որ բխում է հենց Արտաշեսին հրավիրելու փաստից, սակայն պայմանագրին մասնակցելու իրողությունը պահանջում է բացատրություն տալ կոնկրետ հարցերին. ո՞րն էր Հայոց արքայի հետամտած քաղաքական նպատակը, այսինքն՝ ինչպիսին էր նրա դիրքորոշումը պայմանավորվող կողմերի նկատմամբ, ինչպես միջազգային իրավական տեսանկյունից բնութագրել նրա դերակատարությունը, որը պատերազմի մասնակիցները ճանաչում էին իբրև վճռորոշ: Պատմագիտական գրականության մեջ Արտաշեսի մասնակցությունը և դրա միջազգային իրավական նշանակությունն անտեսվում են. նա, առաջինը լինելով պայմանագրին ընդգրկված չեզոք պետությունների շարքում, հաճախ չի էլ հիշատակվում<sup>27</sup>: Լուսաբանվում են, օրինակ, հունական քաղաք-պետությունների մասնակցությունը, նրանց հարաբերությունները փոքրասիական միապետությունների հետ: Պայմանագրի մասին կարծիք է հայտնվել, որ նրա մեջ դրսից ներառնված ոչ պատերազմող կողմերը հաստատում էին նրա պայմանները և պարտավորվում էին պայմանագիրը կնքած նախկին պատերազմող կողմերի պես պատերազմ սկսել պայմանագրային պարտավորությունները խախտած կողմերի դեմ<sup>28</sup>:

---

հետ, իսկ Հանսիբալի ընդունումը Հայաստանում՝ Արտաշեսի արքունիքում, հույն հեղինակների հաղորդած լեգենդների շարքից է, գ) հակառակ է Ստրաբոնի հստակ հաղորդմանը, որ Կարնո գավառն ու Դերջանը Արտաշեսը գրավել էր մոսիսոյկների և յապիթների դեմ կռվում (**Strabo** XI, 14, 5), դ) անտեսում է Ստրաբոնի վկայությունը Փոքր և Մեն Հայքերի արքաների միջև բարեկամության դաշինքի գոյության մասին (**Strabo**, XII, 3, 28) (տես ստորև), ե) և վերջապես՝ հաշվի չի առնում Արտաշեսի կողմից Հայաստանի անվտանգության համար Փոքր Ասիայում Հռոմի գերիշխանության հաստատման իրական սպառնալիքների գիտակցումը:

26 Տե՛ս **Bikerman E.** Institutions des Séleucides, P., 1938, p. 167.

27 Տե՛ս **Will E.** Histoire politique du monde hellénistique, t. 2, p. 288-289. Կ. Հաբիխտը, խոսելով մ.թ.ա. 179 թ. պայմանագրի մասին, հիշատակում է Արտաշեսին առանց, սակայն, փորձելու պարզաբանել նրա դիրքորոշումը: Տե՛ս С. Habicht. The Seleucids and their rivals, "The Cambridge Ancient History", 1989, v. VIII, p. 329.

28 Տե՛ս **Сапрыкин С. Ю.** Гераклея, Херсонес и Фарнак I Понтийский, «Вестник древней истории»,

Նախ՝ մ.թ.ա. 179 թ. պայմանագրի բովանդակության հաստատումը տարածաշրջանում Հռոմի գերակայության և պատերազմի մասնակիցների մեծագույն մասի հետ նրա «դաշնակցային» հարաբերությունների պայմաններում, պետք է կանխապես վերապահվեր հռոմեական կողմին՝ արժանանար սենատի հավանությանը, այլ ոչ մեկ ուրիշի (թեև, նշենք, որ հնագույն ժամանակներից անկախ պետությունների սուվերեն իրավունքն է՝ ինքնուրույնաբար հաստատել կնքվող պայմանագրի պայմանները):

Երկրորդ դրույթը, համաձայն որի՝ պայմանագրի մասնակիցը դարձած չեզոք պետությունը պատերազմելու պարտավորություն էր ստանձնում խաղաղությունը խախտած կողմի դեմ, նկատի ունի, ըստ էության, առանց այդ հասկացությունը հիշատակելու, պայմանագրի երաշխավորության ինստիտուտը (պրակտիկան): Այդ գործառույթը, ինչպես կարելի է նախապես ենթադրել, ստանձնել էր Մեծ Հայքի թագավորը: Առկա հետազոտություններում նշված պարտավորությունը հասկացվում է շատ արձակ կերպով՝ դուրս բերվելով պայմանագրի տարածական գործածության շրջանակներից, պայմանավորվող կողմերի կոնկրետ շահերի ոլորտից և կապվելով հռոմեական արտաքին քաղաքական պլանների հետ:

Խորհրդային պատմաբան Ս. Սապրիկինի պնդմամբ «Հռոմը հասավ խաղաղ պայմանագրի մեջ չեզոք քաղաքների և արքաների ներգրավմանը, ճանաչելով նրանց իր դաշնակիցներ երկու պատերազմող կողմերի դիմաց»<sup>29</sup>: Այսպիսով, հայոց արքաները (որոնց նկատի ունի Սապրիկինը առանց նրանց էթնիկական պատկանելությունը և անունները նշելու) պայմանագրին մասնակցություն են ունեցել իբրև Հռոմի դաշնակիցներ: Այսինքն՝ հարելով պայմանագրին՝ նրանք ելնում էին հռոմեական մեծատիրական շահերից՝ պատրաստակամ լինելով Հռոմի պահանջով պատերազմ սկսել հակառակորդի խմբավորումներից յուրաքանչյուրի դեմ՝ թե՛ Պերգամոնի, Կապադովկիայի ու Բյութանիայի, թե՛ Պոնտոսի և Փոքր Հայքի: Այդ պատերազմը, որին պարտավորվում էին ընդգրկվել Մեծ Հայքն ու Ծոփքը՝ ըստ Սապրիկինի, նպատակ ուներ վճռելու Արևելքում Հռոմի մեծ նպատակները: Պատմաբանը համոզված է, որ մ.թ.ա. 179-ին Հռոմը նոր պատերազմ էր նախապատրաստում Մակեդոնիայի թագավորության դեմ և երկյուղում, որ իր փոքրասիական դաշնակիցները՝ արքանյակ թագավորությունները (նույն Պերգամոնը, Բյութանիան, Կապադովկիան) «բարեկամական հարաբերություններ կհաստատեն Մակեդոնիայի հետ և նրա կողմից կմասնակցեն Հռոմի դեմ պատերազմում»<sup>30</sup>: Հետևաբար այդ նկատառումներով Հռոմը, պայմանագրի մեջ ընդգրկելով չեզոք պետություններին և նրանց մեջ հայոց արքաներին, «նոր դաշնակիցներ էր ձեռք բերում Մակեդոնիայի դեմ պայքարում»<sup>31</sup>: Ինչպես պարզորոշ կերպով ի հայտ է գալիս Սապրիկինի դատողություններից, Մեծ Հայքի և Ծոփքի արքաները մ.թ.ա. 179-ին հարեցին Հռոմի երկարաժամկետ հակամակեդոնական ծրագրերին, այլ կերպ ասած՝ որպես Հռոմի կամակատարներ համաձայն էին հռոմեամակեդոնական

1979, N 3, с. 50-57.

29 Сапрыкин С. Ю., նշվ. աշխ., с. 54.

30 Сапрыкин С. Ю., նշվ. աշխ., с. 55.

31 Сапрыкин С. Ю., նույն տեղում:

պատերազմի դեպքում իրենց զենքով ապահովել հռոմեական փոքրասիական «դաշնակից» թագավորությունների հնազանդությունը Հռոմին: Ի հաստատումն մ.թ.ա. 179-ին Հռոմի ունեցած հակամակեդոնական նպատակների մասին ավելի քան հիպոթետիկ կարծիքի՝ Մապրիկիըն հղում է կատարում ոչ թե սկզբնաղբյուրների տվյալներին, այլ Վ. Սերգենի դասագրքին: Բայց նրա մեջ կա սոսկ մի ընդհանրական նախադասություն, որ Մակեդոնիայի արքաներ Փիլիպոսն ու Պերսևը իրենց հայտարարեցին «ազգային ազատության մարտիկներ»<sup>32</sup>:

Պերսևը Մակեդոնիայի գահ բարձրացավ մ.թ.ա. 179-ին՝ փոքրասիական պայմանագրի կնքման տարում: Հռոմը նրա դեմ պատերազմ սկսեց մ.թ.ա. 172-ին և ավարտեց մ.թ.ա. 168-ին լիակատար հաղթանակով՝ Մակեդոնիայի թագավորության վերացմամբ:

Հռոմեամակեդոնական հարաբերություններին նվիրված ուսումնասիրությունները անվերապահորեն ցույց են տալիս, որ «մինչև 174 թ. հռոմեական քաղաքականությունը Պերսևի նկատմամբ, ըստ էության, մնում էր պասիվ. Հռոմի գործելակերպը չի ապացուցում, որ Հռոմում պատերազմի պատրաստություններ էին տեսնում, հետևաբար ոչ էլ կարծում էին, որ Պերսևն էլ է պատրաստվում»<sup>33</sup>:

Մ. թ. ա. 182-176 թթ. Հռոմի սենատը խուսափում էր վերահսկել Մակեդոնիայի քաղաքականությունը<sup>34</sup>: Իր հերթին Պերսևը մինչև մ.թ.ա. 174 թ. Հունաստանում որևէ հակահռոմեական գործողություն չէր ձեռնարկում<sup>35</sup>: Մակեդոնիայի դեմ պատերազմը Հռոմը որոշեց սանձազերծել մ.թ.ա. 172-ի գարնանից հետո: Գործողություններ սկսելով՝ Հռոմը, հարկավ, ձգտում էր ապահովել Արևելյան Միջերկրածովքում «դաշնակից» հելլենիստական արքաների հավատարմությունը, որոնք, ի դեպ, կասկածամտության առիթ չէին մատուցել, այլ ընդհակառակը՝ Տիտոս Լիվիոսի հաղորդումներով, աճապարում էին հավաստել Հռոմին իրենց հակամակեդոնական դիրքորոշումը, ռազմուժով աջակցելու պատրաստականությունը: Պերսևը այսպիսով հայտնվեց լիակատար դիվանագիտական մեկուսացման մեջ: Հռոմին հնազանդ արքաների շարքում էին մ.թ.ա. 182-179 պատերազմի մասնակիցներ Եվմենես Պերգամոնացին, Արիարաթ Կապադովկիացին, Պրուսիոս Բյութանացին, այնուհետև Սելևկյան արքա Անտիոքոս IV-ը և Պտղոմեոս VI-ը (Tit. Liv. Ab urbe cond, XLII, 29):

Հռոմին ծառայագրված այդ արքաների շարքում Հայոց արքան չկար (ինչպես և չկար Պոնտոսի արքան): Նշենք նաև, որ Հռոմի հանդեպ ռազմական «դաշնակցային» պարտավորությունների ստանձնումը նրա հետ «բարեկամության և դաշինքի մասին» հատուկ պայմանագրով էր հաստատվում: Մինչդեռ աղբյուրներում Արտաշեսի հետ Հռոմի այդպիսի դաշինքի մասին տվյալներ վկայված չեն, և դա, ինչպես տեսանք, պատահական չէ:

32 **Сепрев В. С.** Очерки истории Древнего Рима. М., 1938, с. 112.

33 **Will E.** Histoire politique du monde hellénistique. t. 2, p. 262. **Ferrary J. L.** Rome, les Balkans, la Grèce et l'Orient au deuxième siècle av. J.C. – Rome et la conquête du monde méditerranéen, t. 2, P., 1978 (éd. 1993), p. 755.

34 **Ferrary J.-L.**, նշվ. աշխ., p. 754.

35 **Ferrary J.-L.**, նշվ. աշխ., p. 755.

Ակնհայտ է, որ Սապրիկինի տեսակետը, թե Հռոմը արդեն մ.թ.ա. 179-ից պատրաստվում էր Մակեդոնիայի դեմ պատերազմին, չի հաստատվում փաստացի նյութով: Առավել ևս հիմնազուրկ է հռոմեական փոքրասիական «դաշնակիցներին»՝ սատելիտներին, Մակեդոնիային աջակցելու մղումներ վերագրելու փորձը: Այն, ի դեպ, վկայված չէ աղբյուրներում, որպեսզի դա հիմք ընդունելով՝ դաշնակից թագավորությունների հանդեպ կասկածներ վերագրվեն արդեն Հռոմին, որն իր հերթին նման իրադրության համար պիտի ձեռք բերեր նոր դաշնակից հանձինս Մեծ Հայքի թագավորի:

Այսպիսով, խաղաղ պայմանագրի մասնակից կողմերի շահագրգռությունների հարցը պիտի քննվի նրանցից յուրաքանչյուրի կոնկրետ շահագրգռությունների շրջանակում: Անհրաժեշտ է մեկնել այն պարզ իրողությունից, որ պայմանագրում շոշափվում էին նախ և առաջ պատերազմի անմիջական մասնակիցների շահերը: Երկու խմբավորումն էլ համաձայն էր, որպեսզի Մեծ Հայքն ու Ծոփքը (այդ հայկական տանդեմի, անշուշտ, նվաստ նշանակալից մասնակիցը) իրենց հանդեպ ստանձնեն որոշակի պարտավորություններ:

Հարկ է նկատի ունենալ, որ բացի տարածաշրջանում ռազմաքաղաքական հավասարակշռություն պահպանելու Հռոմի ընդհանուր ձգտումից, օրակարգում էր դրվել Պոնտոսի հակառակորդ պետությունների տարածքային անվտանգության ապահովման խնդիրը: Այստեղ կարևոր է նշել, որ Փառնակեսի կողմից խաղաղ պայմանագրի խախտման և Պերգամոնի, Կապադովկիայի և Բյութանիայի դեմ պատերազմի վերսկսման դեպքում, Սևածովքի քաղաքները՝ Խեռոնտեսոսը, Մեսեմբրիան, Հերակլեան, Մարմարա ծովափնյակի Կիզիկոսը և Ղրիմում սարմատ Գաթալոսը չէին կարող լինել պայմանագրի երաշխավորներ (гаранты), այսինքն՝ ուժ, որը Փառնակեսին կգուշակեր ռազմական գործողությունների վերսկսումից:

Խաղաղության պահպանումը և Պոնտոսի ու Պերգամոնի միջև մոտավոր ուժային հավասարակշռության ապահովումն ի վիճակի էր իրականացնել պայմանագրին միացած հայկական կողմը՝ թեկուզ արդեն իր աշխարհագրական դիրքի միջոցով: Նկատի առնվեց, անշուշտ, Մեծ Հայքի արքայի ռազմական կարողությունը: Դիոդորոս Սիկիլիացին (մ.թ.ա. I դար) նշում է, որ մ.թ.ա. 189-ին գահակալած Արտաշեսի առաջին իսկ քայլերից էր հզոր բանակի ստեղծումը. («հավաքեց հզոր զորք»<sup>36</sup>): Պրոհռոմեական միության (Պերգամոնի, Կապադովկիայի, Բյութանիայի) արքաների միասնական որոշումը՝ Արտաշեսին տեսնել պայմանագրի երաշխավոր (ինչն, անշուշտ, պիտի հավանության արժանանար Հռոմում), արտացոլում էր նրանց բոլորի կողմից մի քանի քաղաքական փաստերի քաջ գիտակցումը.

1. Փառնակեսի ռազմական ելույթը հնարավոր դարձավ միայն Մեծ Հայքի չեզոքության հետևանքով: Հենց այդ դիրքը անհրաժեշտ պայման էր ստեղծում Պոնտոսի հարձակողական պատերազմի համար, որի հաջողությունը վերջնական հաշվով կարող էր սասանել Փոքր Ասիայում Հռոմի քաղաքական գերիշխանությունը՝ Imperium Romanum-ը: Արտաշեսի չեզոքությունը խիստ բարենպաստ էր Փառնակեսի համար և թերևս մատնում էր նման ելքով առաջինի որոշակի շահագրգռվածությունը:

36 *Diod. Sic.*, XXXI, 16, 17a.

2. Հետևաբար, ամրագրել Փառնակեսի նոր, ընդհանուր առմամբ հռոմեանապատ դարձած դիրքորոշումը, այսինքն՝ կանխարգելել ելույթի հնարավորությունը կարելի էր միայն Պոնտոսի թիկունքին Մեծ Հայքի ռազմական սպառնալիքի առկայության դեպքում: Հռոմի դաշնակից արքաների տեսանկյունից՝ պայմանագրին Արտաշեսի միանալը կոնկրետ հենց դա էր նշանակում: Ուշագրավ է, որ մ.թ.ա. 179-ի պայմանագրի վերջին պահանջի համաձայն՝ Փառնակեսը հանձնեց ինչ-որ քանակով պատանդներ (Polyb. XXV, 2): Նրանց կարգավիճակը, Փառնակեսի հետ ազգակցական հնարավոր կապը, Պոլիբիոսը չի լուսաբանում: Եվ, այնուամենայնիվ, այդ միջոցը, որը սովորաբար գործածվում էր պայմանագրի ապահովման նպատակով, բավարար չհամարվեց Փառնակեսի հակառակորդների աչքում: Փառնակեսը, ինչպես երևում է, խոր թերահավատություն էր նրանց ներշնչում<sup>37</sup>: Նրանց համար վճռորոշ էր Արտաշեսի տված երաշխավորությունը:

Սակայն հարկ է հատուկ մատնանշել մի կարևոր հանգամանք. Արտաշեսին պայմանագրի երաշխավորը դարձնելու՝ իր հակառակորդների նախաձեռնությանը պարտված կողմի՝ Փառնակեսի համաձայնությունը բնավ չէր հակասում Պոնտոսի շահերին: Արմավիրի արձանագրությունը մեզ է հասցնում Փառնակեսին Արտաշեսի առաքած ուղերձի ավարտական-արարողակարգային («պրոտոկոլային») ձևակերպումը. «Թող Փառնակեսը կենա տարվա տասներկու ամիսը»<sup>38</sup>:

Երկու տարածապես մերձավոր թագավորությունների՝ Պոնտոսի և Մեծ Հայքի միջև հաստատված են եղել բարիդրացիական հարաբերություններ, որոնց հիմքում պիտի, անշուշտ, դրվեր բարեկամության մասին պայմանավորվածությունը: Քննվող հարցի լուսաբանման համար էական չէ դրա հաստատման ժամանակը՝ մ.թ.ա. 179-ից առաջ, թե՛ հետո. եթե մ.թ.ա. 179-ից առաջ, ապա Արտաշեսի միանալը խաղաղ պայմանագրին որպես երաշխավոր չէր վերացնում հայ-պոնտական բարեկամությունը, իսկ եթե մ.թ.ա. 179-ից հետո, ապա այն առավել սատարում էր Փառնակեսի դիրքը՝ հենց նրա թիկունքը, որին մ.թ.ա. 179-ի խաղաղ պայմանագրի պահանջի համաձայն՝ երաշխավոր կողմը՝ Մեծ Հայքը, հարկ եղած դեպքում պիտի հարվածեր: Համենայն դեպս, այդ իրողությունը՝ հայ-պոնտական բարեկամությունը, Արտաշեսի դիրքորոշումը դարձնում էր ինչ-որ չափով անորոշ, պայմանագրով ստանձնած իր դերակատարության նկատմամբ ոչ անվերապահ: Ինքը՝ Փառնակեսը, կարիք ուներ անվտանգության երաշխիքի իրեն հաղթած հռոմեական «դաշնակից» արքաների (սատելիտների) դաշնության դիմաց, քանզի նրան անկարելի էր իր հերթին ապավինել վերջիններիս տված «հավիտենական խաղաղության» խոստմանը:

Անվտանգության երաշխիքները փոխադարձ են եղել պայմանագրի բոլոր կողմերի համար, այսինքն՝ տարածվում էին Պոնտոսի թագավորության վրա նույնպես: Մեծ Հայքի արքան պարտավորվում էր ելնել խաղաղությունը խախտած յուրաքանչյուր կողմի, այդ թվում Եվմենեսի դեմ

37 Պոլիբիոսը բնութագրում է Փառնակեսին որպես ուխտադրոյժ (XXIV, 15, 9) և արքաների մեջ օրենքներ ամենաշատը խախտող (XXVII, 16, 17):

38 Болтунова А. И. Греческие надписи Армавира, «Известия Армянского филиала Академии наук СССР», 1942, N 1-2, с. 45.

Փառնակեսի վրա նրա հարձակման դեպքում: Եվ այդ հանգամանքը նկատի առնելով՝ մեր առջև ի հայտ է գալիս Արտաշեսի ստանձնած դիրքում ամփոփված իր բուն ստրատեգիական շահագրգռվածությունը: Եթե պայմանագրի խախտողը լիներ հակառակորդներից առավել գորեղ կողմը՝ Հռոմի հավատարիմ հետևորդ Պերգամոնը և իր շուրջը խմբված պրոռոմեական Կապադովկիան և Բյութանիան, ապա Հայաստանը՝ Մեծ Հայքը ու հավանաբար նրան հարող Ծոփքը, կհավասարակշռեին նրանց՝ պաշտպան կանգնելով ավելի թույլ Պոնտոսին: Իսկ եթե հանկարծ խաղաղության խախտողը լիներ Փառնակեսը, ապա այդ դեպքում Արտաշեսը, նկատի առնելով Պոնտոսի արքայի հետ նրա բարեկամական հարաբերությունները և ստրատեգիական շահերը, բացառված չէ, որ կարող էր իրեն վերապահել գործելակերպի ազատություն իր ստանձնած պայմանավորության նկատմամբ: Այնուամենայնիվ, դա ավելի շատ հիպոթետիկ իրավիճակ էր, քանի որ պատերազմը շարունակելու՝ Փառնակեսի հնարավորություններն իրականում զգալի չափով նվազ էին, քան Եվմենեսինը և իր դաշնակիցներինը:

Պայմանագրով ենթադրվող իրադարձությունների զարգացման երկու տարբերակով էլ հայոց արքան իր համար ապահովում էր Փառնակեսի ուժեղ դիրքը բացահայտ հռոմեամետ ուժերի միության դիմաց:

Այսպիսով, ստանձնելով մ.թ.ա. 179 թ. խաղաղ պայմանագրի երաշխավորի (гарант-поручатель) միջազգային դերը՝ Արտաշեսը գործում էր՝ հաշվի առնելով կողմերից յուրաքանչյուրի արտաքին քաղաքական դիրքորոշումն ու շահը:

Փոքր Ասիայում ուժերի հավասարակշռության գլխավոր երաշխավոր պահապանի կարգավիճակով Հայաստանի հանդես գալը՝ նրա միջազգային հեղինակության աննախադեպ ճանաչումը, տվյալ պահին անշուշտ համընկավ Հռոմի դիրքորոշման հետ, որի նպատակն էր, ինչպես վերևում ասվել է, հավասարակշռության պահպանումը Պերգամոնի և Պոնտոսի միջև: Հռոմը, որը չէր մոռացել Հանսիբալի հյուրընկալումը հայոց արքունիքում, ստիպված էր հավանություն տալ Արտաշեսի այդ դերին: Մ. թ. ա. 179-ին ձևականորեն Արտաշեսը քայլ արեց Հռոմի ծրագրին ընդառաջ, բայց դրան զուգահեռ նա իրականացնում էր իր ինքնուրույն նպատակը՝ խափանել Պերգամոնի կողմից հնարավոր թշնամական գործողությունների շարունակությունը Պոնտոսի նկատմամբ և վերջին հաշվով խոչընդոտել հռոմեական գերիշխանության ծավալմանը հայկական սահմանների ուղղությամբ:

Մ. թ. ա. 179 թ. խաղաղ բանակցություններին քննարկման էր դրվել երկրորդ և ինքնուրույն հարց, որի նկատմամբ Արտաշեսը պիտի ցուցաբերեր առանձնակի շահագրգռվածություն: Այդ հարցը վերաբերում էր Փառնակեսի դաշնակից Միհրդատի և Հռոմի հավատարիմ հետևորդ Արիարաթ IV-ի միջև խաղաղության պայմաններին: Միհրդատը իրեն հաղթող Արիարաթ IV-ին պարտավորվում էր մուծել 300 տաղանդի չափ ռազմատուգանք: Կարելի է ենթադրել, որ երկու սահմանակից երկրների՝ Կապադովկիայի և Փոքր Հայքի միջև գոյություն ունեին տարածքային վեճեր, որոնք Կապադովկիայի դեմ Միհրդատի ռազմական ելույթի պատճառը դարձան: Պոլիբիոսը չի հայտնում, որ Միհրդատը պատանդներ հանձնած լիներ Արիարաթին: Եթե այդ կարևոր գործողության չհիշատակելը իրողության



արտացոլում է, ապա այդ դեպքում Կապադովկիայի հանդեպ Միհրդատի խաղաղ պահվածքը երաշխավորվում էր միայն Արտաշեսի բարի կամքով և, հետևաբար, չէր հաստատվում Փոքր Հայքի իրական քաղաքական կախվածությունը Կապադովկիայից (Արտաշեսի պարզորոշ նպատակը), այլ ընդհակառակը, ուժեղացնում էր Արտաշեսի հովանավորչական դիրքը Միհրդատի հետ հարաբերություններում:

Երաշխավորելով Կապադովկիայի և Փոքր Հայքի միջև խաղաղության պայմանագիրը՝ Արտաշեսը կանգնում է կողմերից նվազ ուժեղի կողքին, ինչպես Պոնտոսի ու Պերգամոնի միջև դիմակայության դեպքում, այս անգամ ապահովելով Փոքր Հայքի անվտանգությունը հռոմեամետ Արիարաթի հնարավոր ոտնձգությունից:

Կարևոր է նշել, որ Փոքր Հայքի հանդեպ Արտաշեսի բարենպաստ դիրքը ուներ պաշտոնական միջպետական մակարդակով հիմնավորում: Ստրաբոնի արժեքավոր վկայությամբ «Փոքր Հայքը Ծոփքի պես մշտապես իր դինաստների տիրապետության տակ էր, որոնք մերթ բարեկամ էին (φίλοι) մյուս հայերին, մերթ ինքնուրույն էին գործում»<sup>39</sup>: Մյուս հայերին հիշատակելով՝ Ստրաբոնը նկատի ունի Մեծ Հայքի և Ծոփքի թագավորներին (նա ներկայացնում է մ.թ.ա. II դարի իրադրությունը): Ակնհայտ է, որ Ստրաբոնը նշում է երեք հայոց արքաների իրար «բարեկամ» լինելը, այսինքն՝ երեք հայկական թագավորությունների միջև պարբերաբար իրականացվող դաշնակցային հարաբերությունները՝ միջհայկական համագործակցությունը: Փոքր Հայքի պարտությունը մ.թ.ա. 182-179 թթ. պատերազմում, ի դեպ, միջազգային բեմահարթակում նրա միակ խոշոր ռազմական ելույթում, հրատապ էր դարձնում այդ միջհայկական բարեկամությունը՝ երեք արքաների համերաշխության դիրքերից գործելը:

Մեծ և Փոքր Հայքերի այդ բարեկամությունն ամենայն հավանականությամբ արդեն դրսևորվել էր ռազմական բեմահարթակում: Հենց դա է վկայում Սևածովքի առափնյակի ցեղերի հետ երկու հայկական պետությունների հարաբերությունների մասին Ստրաբոնի տեղեկությունների համադրումը.

1. Այսպես, մինչև Արտաշեսի գահակալումը (189 թ.) Ստրաբոնի խոսքով, Փոքր Հայքի Կարենիտիս և Դերքսենե գավառները գտնվում էին Սևածովքի ափերից հարձակման անցած խալիբների և մոսինոյկների տիրապետության տակ (Strabo, XI, 14.5):

2. Մ. թ. ա. 189-179 թթ. ժամանակահատվածում խալիբերը և մոսինոյկները ծանր պարտություն են կրում Արտաշեսից և դուրս վտարվում Կարենիտիսից և Դերքսենեից, որոնք միացվում են Մեծ Հայքին:

3. Մ. թ. ա. 179-ից հետո ընկած ժամանակաշրջանի համար Ստրաբոնն արձանագրում է միանգամայն նոր իրավիճակ. Սևածովքի առափնյակի ռազմատենչ բարբարոսական ցեղերը՝ խալիբները և տիբարենները, հպատակ են Փոքր Հայքի թագավորներին (ὕπερκόους δ' εἶχον καὶ τοὺς Χαλδαίους καὶ Τιβάρηους., Strabo, XII, 3, 28), որոնց իշխանությունը տարածվում էր մինչև Տրապիզոն և Պոնտական Փառնակիա (ὠθε μέχρη Τραπεζούστος καὶ Φαρνακίας διατείε τὴν ἀρχὴν αὐτῶν): Այսպիսով, Փոքր Հայքի արքաները վճռական հաջո-

<sup>39</sup> Strabo, XII, 3,28.

ղության են հասնում Սևածովքի ռազմատենչ ցեղերի դեմ պայքարում և հարկատու դարձնելով նրանց՝ դուրս են գալիս ծովափ՝ տիրելով Փառնակիայից Տրապիզոն ընկած տարածքին:

Նշենք, որ Ստրաբոնի երկրորդ հաղորդման մեջ հպատակեցված ցեղերի՝ խալիբների և տիբարենների կողքին մոսինոյկները չեն հիշատակվում, սակայն, հարկ է նկատի ունենալ, որ Փոքր Հայքի թագավորին խալիբների և տիբարենների հպատակեցումը անկարելի էր առանց վերջիններիս գորեղ հարևանների՝ մոսինոյկների հերթական ծանր պարտության, առավել ևս, որ Փոքր Հայքի կողմից նվաճված առափնյա տարածքը ներառում էր մոսինոյկների բնիկ հողերի նշանակալից մասը: Քսենոփոնի ժամանակ՝ մ.թ.ա. 401 թվականին, այն ձգվում էր Կերասունտից դեպի արևմուտք՝ մինչև Կոտյուրա<sup>40</sup>: Փոքր Հայքի տիրակալների համար այդ աստիճանի հաղթական բեկումը Սևածովքի ցեղերի դեմ պայքարում, որոնց առաջխաղացումը III դարի վերջերին Կարնո գավառ և Դերջան նրանք չեն կարողացել կասեցնել, հնարավոր պիտի դառնար Մեծ Հայքի արքայից այդ ցեղերի ծանրորեն պարտվելուց հետո միայն, և կարելի է թերևս անսխալ ենթադրել՝ հենց նրա վճռական միջամտության շնորհիվ: Ստրաբոնի նշած ռազմական երկու վիճակները ժամանակագրորեն հաջորդում են իրար՝ ակներևաբար արտացոլելով ռազմական գործողությունների ընթացքը: Այսինքն՝ մ.թ.ա. 180-ական թվականներին Կարենիտիսում և Դերքսենետում մոսինոյկների և խալիբների կրած ծանր պարտությամբ նրանց դեմ Արտաշեսի կոփվը չավարտվեց, այլ շարունակվեց մինչև նրանց հպատակեցնելն իր դաշնակցին՝ Փոքր Հայքի տիրակալին, հավանաբար նույն Միհրդատին: Ուստի նրա ելույթը մ.թ.ա. 182-ին Կապադովկիայի արքայի դեմ անիրագործելի էր առանց Սևածովքի առափնյակի այդ ցեղերի հարձակումներից Փոքր Հայքի թիկունքի ապահովման:

Այսպիսով, մ.թ.ա. 179 թ. խաղաղ պայմանագիրը հարակից պետությունների՝ Կապադովկիայի, Փոքր և Մեծ Հայքերի փոխհարաբերություններում որոշակի տեղաշարժեր արձանագրեց: Այն որոշակի չափով սահմանափակում էր Կապադովկիայի արքայի գործողությունների ազատությունը արևելքում: Արիարաթը, ի դեմս նրանից տարածապես անջատված Մեծ Հայքի, իրական սպառնալիք էր ստանում, որովհետև Արտաշեսը վճռորոշ դեր էր ստանձնում Կապադովկիայի և Փոքր Հայքի միջև հարաբերություններում:

Մ. թ. ա. 182-179 թթ. միջազգային իրադրության քննությունը թույլ է տալիս նշմարել Արտաշեսի հեռու տանող մի մտահղացման ուրվագիծը: Պոնտոսի դաշնակից Փոքր Հայքը, հարձակվելով Հռոմի արտաքին քաղաքականության հետևորդ, «դաշնակից» Կապադովկիայի վրա, փաստորեն գործում էր Մեծ Հայքի ընդարձակ շահերի հունում: Հաղթանակի հասնելով՝ նա կարող էր հետ մղել Հռոմի արքանյակ Կապադովկիային Եփրատով անցնող հայկական՝ ծովական սահմանից և այսպիսով իրականում նպաստել Արտաշեսի կրտսեր դաշնակցի՝ Ծովքի ստրատեգիական մեկուսացմանը հենց նույն Կապադովկիայից, և, ինչպես ցույց են տալիս մ.թ.ա.

40 **Максимова И.М.** Местное население юго-восточного Причерноморья но “Анабасису” Ксенофонта. Дрилы и моссики, «Вестник древней истории», 1951, N 1, с. 259.

163-ի անցքերը, հնարավորություն ստեղծել Մեծ Հայքին ծովփքի միացման համար: Միհրդատի պարտությունը, կարելի է կարծել, հետաձգեց ծովփքի միացման փորձը տասնվեց տարով: Բայց և այն ժամանակ հռոմեական հովանավորչության տակ գտնվող Կապադովկիան այդ փորձում հանդիսացավ Արտաշեսի անհաղթահարելի հակառակորդը: Այդ հանգամանքի լույսի ներքո չափազանցություն չի լինի ասել, որ Միհրդատը՝ Փառնակեսի դաշնակիցը, փաստորեն Արտաշեսի հեռավազ քաղաքականության գործիքն էր կապադովկիական ճակատում:

Այսպիսով, չնայած Արտաշեսի արտաքին քաղաքականության վերաբերյալ տվյալների սղությանը՝ դրանց քննությունը թույլ է տալիս բացահայտել հայոց արքայի՝ Հռոմի նկատմամբ ի սկզբանե ունեցած հետևողականորեն ընդդիմադիր դիրքորոշումը:

Արտաշեսի քաղաքականությունը ճիշտ կլինի բնութագրել որպես բազմաթիրախային, հեռավազ: Առաջադրված խնդիրները նրա կողմից ըմբռնվում էին իրենց ողջ բարդությամբ, միջազգային բոլոր գործոնների և շահերի հաշվառումով: Յուրաքանչյուր իրադրությունը հայոց արքան աշխատում էր առավելագույնս օգտագործել: Նրա չեզոքությունը մ.թ.ա. 182-179 թթ. պատերազմում պայմաններ էր ստեղծում հռոմեական դաշնակիցների դեմ Պոնտոսի և Փոքր Հայքի համատեղ գրոհի համար: Իսկ հռոմեամետ դաշնության հաղթանակի պայմաններում նրա դիվանագիտական միջամտությունը խաղաղ պայմանագրի երաշխավորի դիրքերից կանխարգելում էր Հռոմի դաշնակիցների կողմից ուժային բալանսի (հավասարակշռության) խախտման հնարավորությունը փոքրասիական թերակղզու արևելքում և միաժամանակ ամրապնդում էր Մեծ Հայքի ազդեցությունը Փոքր Հայքի և ծովփքի վրա:

Փոքր Ասիայում Հռոմի աճող գերիշխանության պայմաններում Հայոց արքա Արտաշեսը տարածաշրջանում միակ տիրակալն էր, որը պահպանում էր նրա առջև իր անկախ դիրքը<sup>41</sup>:

41 Չի կարելի չարձանագրել, որ Պոլիբիոսի հաղորման մեջ (**Polyb.** XXV, 2) պարզորոշ է կողմնապահ վերաբերմունքը պայմանագրի մասնակիցների տիտղոսների, այլ կերպ ասած՝ նրանց քաղաքական ստատուսի նկատմամբ: Եվ Արիարաթը, և՛ Մորգիոսը (ի դեպ, Պափլագոնիայի այդ գահակալը չէր ներգրավվել պայմանագրի կնքմանը), և՛ նրանց հակառակորդ Փառնակեսը անվանվում են արքաներ: Մինչդեռ Արտաշեսին, որն իրեն արքա էր (*βασιλεως*) հռչակել և արքայի տիտղոս է կրում իր արձանագրություններում, Պոլիբիոսը բնութագրում է որպես «դինաստ» Ասիայից և Հայաստանի «արխոն» (տիրակալ):

Նմանապես և Միհրդատը՝ Փոքր Հայքի ինքնիշխան տիրակալը և խաղաղ պայմանագրի ինքնուրույն կողմը, բնորոշվում է ցածրաբար իբրև «սատրապ», այսինքն՝ նշանակովի «վարչապետ»: Արտաշեսի քաղաքական վիճակի բնութագրման համար «արքայի» տիտղոսի համեմատ միահեծան իշխանություն նշանակող նվաստ տիտղոսների հաջորդական օգտագործումը («դինաստ», «արխոն»), Պոլիբիոսի կողմից թվում է թե պատահական չէ (նրան անսովոր անփութության հետևանք չէ), այլ Հռոմի պաշտոնական դիրքորոշման արտացոլում: Այսինքն՝ սենատը չէր ճանաչում Արտաշեսի թագավորական տիտղոսը, ինչը կարող էր լինել Հռոմի և հայոց արքայի միջև դիվանագիտական շփումների բացակայության և «բարեկամության» մասին դաշինքի չկայացման հետևանքով: Պոլիբիոսի կողմից Արտաշեսի արքայական տիտղոսի անտեսումը համաձայնվում է Տիտոս Լիվիոսի այն ցուցման հետ, որ Հռոմի հետ շփումների մեջ են մտել Տավրոսից «այս կողմ», այսինքն՝ դեպի արևմուտք բնակվող բոլոր ժողովուրդներն ու քաղաքները: Այսպիսով, Պոլիբիոսի, ինչպես և Տիտոս Լիվիոսի հաղորդումները, որոշակի վկայություն են, որ Արտաշեսը չէր ձգտում «բարեկամական» հարաբերությունների հաստատմանը Հռոմի հետ, որոնք նշանակում էին նրանից քաղաքական կախվածության հաստատում: Այդ առթիվ տրամաբանական է այստեղ հետևյալ մասնավոր կարգի դիտարկումը. 179-ին պայմանագրի մասնակից հայոց արքային Հռոմը ճանաչում էր Հայաստանի տիրակալ փաստացի կերպով, իսկ փոքրասիական հռոմեական դաշնակից թագավորները իր դեսպանների միջոցով ներկայացված

**Ռուբեն Լ. Մանասերյան** – գիտական հետաքրքրությունների ոլորտը անտիկ Հայաստանի և հելլենիստական երկրների պատմությունն է և Արևելքում Հռոմի արտաքին քաղաքականության հոլովույթը մինչև 5-րդ դար: Այդ հիմնահարցերի վերաբերյալ հրատարակել է երեք մենագրություն և բազմաթիվ գիտական հոդվածներ:

Summary

**ARTAXIAS I AND ROME’S POLICY IN THE ASIA MINOR (189–179 B.C.)**

Ruben L. Manasserian

**Key words** – Rome, Armenia, Artaxias I, Pharnaces I, Hannibal, Titus Livius, Pontus.

The works of Polibius and of Liny don’t contain any data regarding contacts between Artaxias that had proclaimed himself king of Great Armenia in 189 and Rome.

Titus Livius, pointing out the eastern peoples and cities which recognised roman Imperium in the years 184–188, emphasizes that they all had inhabited the territories laying to the West of Taurus (cis Taurum montem incolunt – Tit. Liv. XXXVIII, 3, 7, 1). According to the Greek geographers (Strabo, XI, 14, 2), Taurus beginning into the north of Armenia (near the upper Euphrates) went down to the south up to Mesopotamia, thus serving the natural boundary between Asia Minor and Armenia. The conclusion, therefore, may be drawn from these testimonies: unlike the kings of Asia Minor Artaxias avoided to establish relations with Rome and did not aspire to be recognized as a roman friend and ally.

2) Strabon’s and Plutarch’s data of the refuge given to Hannibal by Artaxias at his court (189–186) reflects the true fact. Having admitted that Hannibal Artaxias asserted his independent attitude towards Rome.

3) In 179 Artaxias took part in the conclusion of the peace treaty which put an end to the war between roman allies – Pergamus, Bythania and Cappadocia on the one hand and Pontus and Armenia Minor on the other. The latter were defeated. Artaxias is mentioned the first in the list of the neutral international subjects – participants of this peace treaty (Polyb., XXV, 2). As it is shown in article, the king of Great Armenia played the role of the principal guarantor of the piece treaty, i.e. he pledged to come out against each disturber of the piece. By such Artaxias resolved his strategical aims. He could prevent the threat of transgression of forces’s correlation by stronger site – roman clients’s coalition and could ensure the security of Pontus and Armenia Minor.

Արտաշեսին ճանաչում էին իր վեհագույն արքայական կարգավիճակով:

## АРТАШЕС I И ПОЛИТИКА РИМА В МАЛОЙ АЗИИ (189–179 ГГ. ДО Н. Э.)

Рубен Л. Манасерян

**Ключевые слова** – Рим, Армения, Арташес I, Фарнак I, Ганнибал, Тит Ливий, Понт.

Труды Полибия и Тита Ливия не содержат данных о контактах между Арташесом, провозгласившим себя в 189 г. царем Великой Армении и Римом.

Тит Ливий, говоря о восточных народах и городах, признавших в 189–188 гг. Imperium Romanum – верховную власть Рима, подчеркивает, что они все проживали к западу от Тавра (cis Taurum montem incolunt – Tit. Liv. XXXVIII, 37, 1). Согласно представлениям греков (Strabo, XI, 14, 2) горная цепь Тавра, начинаясь на севере Армении (в области верхнего течения Евфрата), спускалась на юг до Месопотамии, служа, таким образом, естественной границей между Малой Азией (“Азией”) и Арменией. Из указания Тита Ливия, следует, что в отличие от малоазийских царей, Арташес не стремился к установлению отношений с Римом и признанию себя в качестве римского “друга и союзника”.

2) Данные Страбона (XI, 14, 6) и Плутарха (Лис. XXXI) о предоставлении Арташесом убежища Ганнибалу отражают подлинный факт (189 –186 гг.). Принимая у себя при дворе Ганнибала, Арташес демонстрировал Риму свою независимую позицию.

3) В 179 г. Арташес принял участие в заключении мирного договора, положившего конец войне между “римскими союзниками” Пергамом, Каппадокией, Вифинией с одной стороны и Понтом и Малой Арменией – с другой: Царь Великой Армении упомянут первым в перечне нейтральных правителей и независимых городов, привлеченных сторонами конфликта к участию в мирном договоре. Арташес брал на себя обязательство гаранта – поручителя мирного договора т.е. обязывался по взаимному согласию сторон выступить против каждой из них в случае нарушения ею мирного договора. В условиях военного превосходства коалиции римских сателлитов – “союзников” над Понтом и Малой Арменией роль гаранта мирного договора означала для Арташеса решение им стратегической задачи по предотвращению угрозы нарушения соотношения сил более могущественной стороной и обеспечению безопасности Понта и Малой Армении.